

Թիւ 27288
Մարտ 18, 1981

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Թիզիրեան
Հոգեւոր Մասակարար Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Եղիշէ,

Ստացած ենք Փետրուար 27, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար Ցին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի Խօթն անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Սարգիս Չիլինկիրեան
Ղեւոնդ Խոսրովեան
Թորգոմ Զապունեան
Նշան Մանճըլըքեան
Յարութիւն Եսայեան
Յակոբ Երէցեան
Ժան Յովակիմեան՝ մէկ տարի